

## ԱՆԻ - ԳՅՈՒՄՐԻ

(Ճակարագրով կապված եկեղեցիներ)

Գյումրի այցելելու այդօրվա իմ ծրագիրը լուսանկարելն էր հին փնտրել և «Ամենափրկիչ» եկեղեցին՝ վերջինիս կառուցման պարմությունը զուգահեռելու Անիի Մայր եկեղեցու հետ: Եկեղեցու մոտ այդ պահին Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանն էր: Ես գիտեի, որ նրա մշտական հսկողությամբ, Կառավարության փրամադրած միջոցներով, քաղաքային բյուջեից առանձնացվող գումարներով ու նաև անհատական ներդրումներով է վերակառուցվում եկեղեցին: Այդ պարճառով էլ նա այդպեղ էր՝ հերթական հսկողական այցով:



– Եթե գյումրեցիներ Անդիկենց թաթոնն ու Արդար Մանուկը այս հրաշալի կոթողը կառուցել են, որ Գյումրին Անիի եկեղեցու նմանակն ունենա, մենք պարտավոր ենք կանգուն պահել այն: Առայժմ հազար ու մի պարճառներով մի քիչ դանդաղ են առաջ գնում վերակառուցման աշխատանքները, բայց կարծում եմ շատ հեռու չէ այն օրը, երբ այն կգործի:

Ես հավատում եմ խոսքումներին, մանավանդ, եթե դրանք առնչվում են աստվածահաճո գործերի հետ. այս պարագայում խոսքումը աղոթքի նման մաքուր ու երդումի պես

պարտավորություն վերցնող պիտի լինի:

– Տավարքի փունը կիսավեր չի կարելի թողնել՝ Աստու առաջ մեղավոր կմնանք, - ասաց քաղաքապետը՝ ի ամրապնդումն իր փված խոսքումի, և մենք բաժանվեցինք. նա գնաց իր գործին, ես անցա լուսանկարելուն:

Վերակառուցվող եկեղեցին «բավականին հասակ է առել», կարծես քիչ ժամանակ է մնացել այն օրվան, երբ այսպեղ էլ մոտ 80 փարվա լոռությունից հետո կլսվի պարարագի անուշ մեղեդին, որ պիտի խորհրդանշի նաև Անիի Մայր եկեղեցու վերածնունդը՝ իր երկվորյակի զարթոնքի խորհրդանշական զուգահեռումով: Լուսանկարչական ապարափի «Էկրանին» իրար են հաջորդում եկեղեցու ընդհանուր և առանձին, այսպես ասած, խոշոր կադրեր, բայց մի հուշարեսարան ինձ հանգիստ չի փախս՝ շարունակ սևեռվում է իմ նկարած կադրերում: Դա մի փեսարան է 1989 թվականի դեկտեմբեր 7-ին այս ավերված եկեղեցու մոտ կայացած «համերգից»: Տամերգ ասածը մի խենթ ուսուցչուհու կազմակերպածն էր՝ իր սաների միջոցով ասմունք ու երաժշտություն այդ ցուրտ ձմռանը: Նա՛ այդ խենթ ուսուցչուհին, փորձում էր աղեպյալ քաղաքում կանխել հոգու երկրաշարժը: Ես իմ նոթափայտում արել էի մի գրառում՝ այդ իրողությունը չմոռանալու համար, պարկեր, որ հիմա երևակայորեն անընդհար պարկերանում էր լուսանկարչական ապարափի օբյեկտիվի առաջ:

### Նոթափայտ

«Վրիպ մարմնով երեխան կանգնած էր երկրաշարժից փլուզված եկեղեցու ավերակների վրա ու... Չարենց էր արտասանում: Ո՞վ էր այդ միջոցառման կազմակերպիչը՝ դասափուլ՝ էր, գեղագետ մե՛կն էր, նկարի՞չ էր, թե՛ երաժիշտ, որ այս ցրտին իր սաներին բերել-կանգնեցրել էր եկեղեցու ավերակների վրա ու ավեր քաղաքին կենդանություն էր փորձում փալ:

«Դու մի օր կանցնես այսպեղից:

Կուղեկցե քեզ երգը գունայի:  
Ու Գյումրին, գորշ ու դեղին,  
Անսարբեր, մռայլ կնայի...»:

Ասմունքին պիտի հաջորդեր ջութակի նվագը, բայց նվագը ուշանում էր. պատանին՝ ջութակը ծնուրով պահած, իրար շփելով փաքացնում էր սառչող ձեռքերը: Ներս ուրբերով փրորեց քարերի վրայի ձյունը և, համոզվելով, որ ամուր է կանգնած, սկսեց նվագել: Ավերակների վրա հաճելիորեն փարածվեց ջութակի թավշյա երաժշտությունը: Օդում փաթություն գգացվեց. մի ջերմ շունչ ջութակի մեղեդու հետ դանդաղ ու հաճելիորեն սկսեց փարածվել կիսակործան եկեղեցու պատերով ու ընկած խոյակների վրա, դրանց շուրջ հավաքվող մարդկանց մի պահ մոռանալ փվեց հոգս ու մտածում, նրանց փրկում պահվածքը դարձրեց նվագի ուժով եկող կենսարար կեցվածք...»:

Վերընթերցեցի նոթապետրիս այդ էջը և շափ ուզեցի, որ այս գիրքն առիթ դառնար՝ գրնելու այն ուսուցչուհուն, այն երեխաներին: 19 փարվա հեռուների այդ «իմ հերոսները» հիմա ինչ դրության, ինչ իրավիճակում էլ լինեն, մի բան ինձ համար պարզ է՝ նրանք հասարակ չեն հեռացել Գյումրիից ու չեն հեռանա. նրանց այդ պահվածքի, իրենց աղեպայալ քաղաքի ու նրա բնակիչների հանդեպ ունեցած սիրո և վերաբերմունքի փեր անձը երբևէ չի լքի իր բնօրրանը:

Շարունակելով եկեղեցու վերածնունդի հետ կապել այդ հմայիչ երեխաների ու նրանց ուսուցչուհու նախանձախնդիր վերաբերմունքը, ես մտաբերեցի դեռ խորհրդային փարիներին «Ամենափրկիչ» եկեղեցուն հրապարակ «դուրս բերելու» Վազգեն Վեհափառի ծրագիրը, որն, ավաղ, այն ժամանակ չիրականացավ ու, ցավալիորեն, դա «արվեց» երկրաշարժի հետևանքով: Վեհափառի իղձը հետևյալն էր: Շարերը կհիշեն նախատերկրաշարժյան Գյումրվա հրապարակը՝ Վարը: Նրապարակը զոփուորող եռահարկ բնակելի շենքերը հետնամասում էին թողել «Յոթ վերք» և «Ամենափրկիչ» եկեղեցիները: Վեհափառը առաջարկում էր բնակիչների համար բնակարաններ կառուցել քաղաքի՝ նրանց ուզած վայրում և այդ երկու շենքերը հանել հրապարակից՝ եկեղեցիները փեսանելի դարձնելու համար:

...Երբ 1989-ի դեկտեմբերին Վեհափառն այցելեց Գյումրի, փեսավ քանդված այն նույն շենքերը, որոնց փեղափոխման խնդիր էր առաջադրել ժամանակին, ցավագին ափսոսանքով ասաց. «Մենք այս ճանապարհը չէինք ուզում՝ սա դաժան իրողություն է»:

1903 թվականին, լինելով Անիում, Լեոն շափ գեղեցիկ է բնութագրել Անիի Մայր եկեղեցին՝ «Աղեպների քաղաքի այս հրաշագեղ թագուհին»: Այն 989 թ. սկսել է կառուցել Մմբար Երկրորդ թագավորը, իսկ 1001թ. ավարտել է Գագիկ առաջին թագավորը: Ճակատային մասով դեպի Ախուրյան գետը, եկեղեցին հոյակապ դիրք ունի և շափ պարզ երևում է նաև գետի այս ափից, այսպես ասած, «մեր կողմից»: Ճիշտ այդ եկեղեցու նմանակը կառուցվել է Գյումրիում:



Դա «Ամենափրկիչ» եկեղեցին է: Շինարարությունն իրականացնող վարպետներն են եղել Թադևոս Անդիկյանը (Անդիկենց Թաթոս) և Մանուկ Պեպրոսյանը (Արդար Մանուկ): Դա եկեղեցաշինության պարամոնային մեջ աշխարհում նախադեպը չունեցող մի իրողություն է, աներևակայելի մի պարամոնային: Տասնչորս փարի շարունակ, ամեն կիրակի օր, Թադևոս Անդիկյանը Գյումրիից կառքով գնացել է Անի՝ Մայր եկեղեցում չափագրություններ կապարել, և, «կենդանի նախագիծ» որպես՝ Գյումրիում ուղղություն րվել ու ղեկավարել «Ամենափրկիչ» եկեղեցու շինարարությունը: Մաքնանշենք ուշագրավ մի փաստ. նկարի առնելով քաղաքը սեյսմիկ գոտում լինելու հանգամանքը, եկեղեցին կառուցել են քաղաքի կենտրոնով հոսող գետակի ճահճուտ ափին, որը պիտի նվազագույնի հասցներ ստորգետնյա ցնցումների ուժը:

Այդպես, Անիի Կաթողիկե Մայր եկեղեցու օրինակով՝ Գյումրին ունենում է իր «Ամենափրկիչ»-ը, որի շինարարությունն ավարտվում է 1876 թվականին: Կառուցողները մի զարմանալի հնարանք էլ էին օգտագործել՝ եկեղեցին բարձրանում էր «խիտ և ամուր խճաքարա-կոպճային նստվածքների վրա, որոնք հուսալի հիմնաքար են հանդիսացել կառույցի համար» (Գյումրիի երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի մասնագետներն էին րվել այս եզրակացությունը): Այդ երաշխիքով է, որ «Ամենափրկիչ»-ը 1926 թվականի երկրաշարժին մասնակի վնասվածքներով կանգուն էր մնացել: Թե ինչու՞ չդիմացավ 1988-ի երկրաշարժի հարվածներին, րարբեր վարկածներ կան՝ կամ երկրաշարժն էր շար ուժգին, կամ էլ 1980-ականներից սկսված «Ամենափրկիչ» եկեղեցու նորոգչական՝ րարիներով ձգձգվող աշխատանքներն էին ինչ-որ րեղ թուլացրել եկեղեցին:

### Նոթարեպր

1985-ին հեռուարարեսային հաղորդում էինք նկարահանում՝ «Կումայրի» արգելոց-թանգարանի համալիր ծրագիրն իրականացնող խմբին ՆՍՄՆ Պեպրական մրցանակ շնորհելու առիթով, և հաճախ էր «Ամենափրկիչ» թեման արժարծվում: Մրցանակ էին սրացել քաղաքի գլխավոր ճարարարապետ Մաշուր Քալաշյանը, հարուկ գիրա-արարադրական վերանորոգման արվեստանոցի րնօրեն Մասուն Գրիգորյանը, ճարարարապետ Ավետիք Միրիջանյանը և Լավրենյի Բարսեղյանը:

Տիմա ես գրում եմ այս րողերը, և հիշողությանս մեջ ու նոթարեպրիս գրառումներում այն օրերի հանդիպումներն են այդ մարդկանց հետ, գրույցներն ու նկարահանումները,



նախաերկրաշարժյան անհոգ, ծաղկուն քաղաքի մարդկանց աշխույժ բանավեճերը «Մինուճար «Ամենափրկչի» մասին: Մինուճար բառը լենինականցիներն օգտագործում էին՝ անհրաժեշտ գուրգուրանք դրսևորելով Անիի Մայր եկեղեցու նմանակին, որ «մենակ է մնացել՝ Անին մեզնից խլելուց հետո»:

Սասունն ու Ավերիքը վաղ հեռացան կյանքից: Նրանք չբեսան երկրաշարժի հետևանքով եկեղեցու ավերվելը, եկեղեցի, որ «Կուսայրի» արգելոց-թանգարանի զարդն էր, իրենց փայփայած ու գուրգուրած հուշարձանը, որի կանգուն ու շեն մնալու համար այնքան ջանք ներդրեցին: Սաշուրը կորցրեց իր անմիջական գործընկերներին, իր մտերիմներին, ես կորցրի նկարահանումների օրերին գրած, մտերմացած, հարազատ դարձած մարդկանց:

1987-ին նորոգչական աշխատանքների ճիշտ կամ սխալ լինելու թեման շարունակվեց քննարկվել Լենինականի «Բանվոր» թերթի էջերում: Ի պատիվ քաղաքային «Բանվոր» թերթի, պետք է ասել, որ

բացված բանավեճն առիթ դարձավ, որ քաղաքում լայնորեն հրապարակվի «Ամենափրկչի» եկեղեցու հետ կապված ամեն մի աշխատանք: Բնակիչները, ովքեր միշտ հիացմունքով են նայել այդ հույակերտ կառույցին, մտավախություն ունեին, թե կտուրի վրա պատրաստված տախտակամածի երկաթյա սյուների փորվածքներից անձրևաջրերի կամ ձյան հալոցքից առաջացած ջրերի հետևանքով կթուլանա կտուրը: Այդ մտավախություն-կարծիքը բոլորը չէ, որ կիսում էին, բայց փազնապը կար: Գոնե Սասունի համար պատասխանատվությունը մեծ էր, քանի որ նորոգչական աշխատանքներին մասնակից էր նրա ղեկավարած՝ հատուկ գիտա-արտադրական վերանորոգման արվեստանոցը: Այն ժամանակ Սասունը նորոգումը հիմնավորում էր մի շարք պարճառներով՝ «...1926 թվականի երկրաշարժի և ջրերի հոսքի հետևանքով թմբուկի և վեղարի մեջ քեղի էր ունեցել շերտավորում, ինչպես և ոլորում՝ կտր լուսամուտների շրջանում, որոնց պարճառով քարերը փեղաշարժվել և քայքայվել են... թմբուկը երկու առանձին հորիզոնական հարթություններով միմյանցից անջարվել և փեղաշարժվել էր»: Երբ որոշվել էր, որ եկեղեցին պետք է որպես ֆիլիարմոնիա օգտագործվի, առանց մասնագետների հետ խորհրդակցելու, քանդել էին ներսի պարզամբը, եկեղեցուն կից ճեմարանը: Եվ Սաշուրն էլ, Սասունն էլ դա կոպիտ միջամտություն էին համարում: Բայց եղածը եղել էր, և այն փարի՝ 1985-87-ին մեն մի մտահոգություն կար՝ փրկել հուշարձանը:

Սակայն... հուշարձանը չդիմացավ երկրաշարժին՝ ուժգին երկրաշարժին: Այդ թեման մասնագետներին թողնենք և դառնանք Անիին:

1988-ի երկրաշարժից, ով փարօրինակ ու նույնացող ճակատագիր, փլուզվեց նաև Անիի Մայր եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյունը:

Ես լուսանկարեցի եկեղեցու այդ հատվածը և կրկին հիշեցի Լեոյին, հիշեցի նրա մարգարեական գուշակությունը. «Մեր առջև, առավոտյան քնքույշ լույսերի, անմահական ժպիտների թարմության մեջ բարձրացրել է իր սգավոր, կրծոտված մարմինը մի մեծ, մի չքնաղ ավերակ՝ երկնքի ու երկրի փոներին հակադրելով մի սուսկալի անհույս մեռելություն: Մայր եկեղեցին է... Նրա երկու անկյուններից մեկը, որ նայում է արևմուտքին, ճեղքված է վերնից՝ կտուրից մինչև համարյա կեսը: Մի գարհուրելի վերք այդ հին, կիսամաշ մարմնի վրա... ճեղքը վերնից լայն է, այնտեղից քարեր շար են թափվել: Թվում է, թե այդ վիրավոր անկյունը այլևս չի կարողանում կապ պահպանել երկու պատերի մեջ... Նայողը փխրությամբ համոզվում է, որ

Մայր եկեղեցու փլուզումը այսպեղից պիտի սկսվի... Մի թեթև պարահականություն կարող է մի ժամում աղեպ բերել աղետների քաղաքի այս հրաշագեղ թագուհու գլխին»:

85 տարի անց Լեոյի այդ անհանգստությունը, ավաղ, ճիշտ դուրս եկավ՝ նրա նկարագրած հարվածը փլուզվեց: Դարձյալ գուգահեռվեցին Անիի և Գյումրիի նույնանման եկեղեցիների ճակարագրերը: Շապ խորն էր Լեոյի եւ անհանգստությունը, եւ հուսահատությունը. «Տեր Աստված, որքան անարբեր, անկարող ենք մենք...»:

Տիմա Գյումրիում տարվում են «Ամենափրկիչ» եկեղեցու վերականգնման աշխատանքներ: Թեպետ դանդաղ ու դժվար, բայց և տարվում են: Անիի Մայր եկեղեցու պարագան այլ է՝ Մայր եկեղեցին այլ պետության տարածքում է: Նուսանք, թե Աղթամարի «Սուրբ Խաչ» եկեղեցու բախտին կարժանանա Մայր եկեղեցին, և այն երկրի կառավարությունը, ում տարածքում է այսօր Անին, նորոգչական աշխատանքներ կսկսի նաև Մայր եկեղեցում: Այս պարագայում աշխարհի պարամաշակութային հուշարձաններից մեկի՝ Անիի Մայր եկեղեցու փրկության խնդիրն է առաջնային: Թե նորոգված եկեղեցին ի՞նչ կարգավիճակով կմնա, հետագայում խոսելու թեմա է: Բայց այսօր Անիի Մայր եկեղեցին՝ գմբեթագուրկ, կողաջարդ Կաթողիկեն, կարոտում է իր վերակառուցողին: Գուցե ժամանակին Անդիկենց Թաթոսն ու Արդար Մանուկն Անիի կորստի ու Մայր Տաճարի ավերման փխուր իրողության տեսակա՞նն ունեին, որ ավելի ապահով վայրում «Ամենափրկիչ» եկեղեցու կառուցումը սկսեցին՝ ունենալու ճիշտ նմանակն այն հրաշք եկեղեցու, որի պահպանությունը դժվար կլինի ավեր քաղաքում, մանավանդ, որ եկեղեցիներն այդ քաղաքում միայն երկրաշարժից չէ, որ ավերվում էին ու ավերվում են...

Ցավալիորեն փխուր կլինի այս երկու եկեղեցիների ճակարագրի մեկ այլ գուգահեռում էլ անել: «Ամենափրկիչ»-ը վերակառուցվում է իր պահպանված քարերով, իր խոյակներով ու սյուներով: Վերակառուցվում է անկախ Նայաստան երկրում՝ հոգատար վերաբերմունքով, պետության հովանու ներքո, նաև մասնավոր ներդրումներով:

Իսկ Անիի Կաթողիկեն, (եթե անգամ Աստված հաջողի նրա վերակառուցումը), կարոտ պիտի մնա իր հարյուրամյա նախաքարերից շարերին, որոնք թալանված են ու թալանվում են՝ իրենց ոչ հարմար տեղը գտնելով Անիի հարևանությամբ քրդաբնակ գյուղի փների, անգամ անասնագուների որմերի շարվածքում: Այդ փնաքարերի համար դրանք պարզապես քարեր են, որ բերվել ու շարվել են՝ հայկական փռերն ու նախշերն անգամ վրայից չջնջված: Ամեն ինչի մեջ խորհուրդ դնելու, խորհուրդ տեսնելու հայերիս բնույթը մի պահ կարծես թե հաշտվում է այդ իրողության հետ՝ գուցե կյանքի շարունակությունն փռերն ենք՝ երեխաներով լեցուն այս փների պարերին ավեր եկեղեցու քարերը նկատելով: Մեղայ Աստու՝ մի կողմում քո զգացողությունը, մյուսում՝ այսօր այս վայրում փրկություն անողի անարբերությունը:

Մի պահ դադար տանք, և լսենք Լեոյին. «...Բնությունը ոչինչ չէ գողանում, ոչինչ չէ փանում: Իսկ մարդը մոտենում է բորենու նման. նրան գրավում են հղկած, զարդարուն սալ քարերը, որոնք շինության երեսն են կազմում: Եվ նա դանդաղ պոկում է այդ քարերը, մաշկում է գեղեցիկ շինությունը...»:

Նարևան քրդաբնակ գյուղի բնակիչներից Անիում մեզ հանդիպած մարդկանց հետ ինչ թեմայից էլ խոսենք, նրանք անհաղորդ պիտի մնան մեր զգացումներին էլ, մեր վերաբերմունքին էլ՝ նրանց համար դա սրբաբաշ քարերի վայր է՝ իրենց փների որմերին շար «հարմար», դա նաև անասուններ արածացնելու վայր է, որովհետև «խոտն այսպեղ շար փարթամ է աճում»: Նրանց ի՞նչ փույթ, թե դա երբեմնի արքայանիստ քաղաքի սրբավայրն է: Գուցե նրանց այս վերաբերմունքը նկատի ունեն հայրնի հայ իրավագետը, որ նաև խոհա-խմաստասիրական բանաստեղծությունների հեղինակ է.

«...Տեր իմ,

Գոնե այս անգամ պապերիս պարզամ

Աղոթքը լսիր.

Էլ մեզ մի փանջիր ու էլ մի փորձիր

Վայրի ցեղերին ավերակ դարձած  
Տաճար նվիրել,  
Անտարակույս է, որ այն մշտապես  
Ախոռ կդառնա...»:

Ներկայումս շատ հեռավոր անցյալում Նաֆեզն արդեն արել է. «Ծաղկեփնջի գինը  
միայն հավքը գիրի այգեպանի, //Եվ ոչ թե նա, որ կարդաց, բայց չըմբռնեց միտքը բանի...»:



*Շարունակելի*